


Թերթ կը ղրկուի կանխիկ վճարողներու միայն:

ԲԱԺՆԵԳԻՆ

Ի Պուլկարիա
Տարեկ. 10 ֆր.
Վեցամս. 5 "
—
Երա՛սա՛հման
Տարեկ. 12 ֆր.
Վեցամս. 6 "
—
Ամերիկա
2 Տոլ. 30 սենդ
—
ԿԱՆԽԻԿ



ՊԱՅՄԱՆՔ

Գրութիւնք եւ
չեն տրուիր:

Հասցէ

DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՅԱԲԱԹԱՅԱՆԴԵՍ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱՒԵԾՏԱԿԱՆ

— ОТГОВОРНИКЪ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ. —

2. ՏԱՐԻ

— ՄԱՅԻՍ 13 ԵՐԿՈՒՇԱԲԹԻ 1902 —

ԹԻՒ 250

ԱԶԳԱՅԻՆ

Յառաջիկայ Համբարձման տօնին օրը Ս. Պատրիարքը անձամբ պիտի կատարէ Ազգ. Հիւանդանոցի Մատուռին շինութեան հիմնարկէքի արարողութիւնը:

— Պարսից Շահը՝ Ազգ. քսանդրիոյ ազգայիններէն Տիար Միհրան Գալֆաեանի Բ. կարգի Շիր ու խորշի պատուանշանին Հետ Խանութեան աստիճան շնորհեր է:

— Պուլկարաց Ամեն. Էկեղարքը անցեալ օր իր առաջին գործակատարին ընկերակցութեամբ յատկապէս շնորհակալութեան գացեր է մեր Պատրիարքարանը, իր Յորեւեանին առթիւ ի դիմաց ազգին ղրկուած պատգամաւորութեան համար, և ուր արժանաւայել ընդունելութեամբ պատուասիրուեր է:

— Նոր Զուղտյի մէջ տիկին Վառվառէ Քանանեան, ամուսնոյն հանլուցեալ Գէորգ Քանանեանի յիշատակին, նոյն անուամբ դպրոց մը բացեր է 1901 օգոստ. ամսէն ի վեր:

— Ուրախութեամբ լսեցինք թէ Վառնայի մէջ Հայ հրատարակչական ընկերութիւն մը կազ-

մուելու վրայ է, ժողովրդին օգտակար եղող դիրքեր ու պաշտօններ տպագրելու համար:

— Ի նպաստ Ազգ. Հիւանդանոցի մարտ ամսոյ մէջ եղած նուիրատուութեանց գումարն է 6659 ուկէս ղուրշ, Իսկ սիկարի թղթի նոյն ամսոյ հասոյթը եղած է 3225 ղուրշ:

— Իզմիրէն ղրկուած մասնաւոր նամակէ մը ցաւելով կը տեղեկանանք թէ Մեսրոպ Նուպարեան, ծանօթ թարգմանիչն ու բառագէտը, մանրէ հիւանդութեան մէջ կը գտնուի:

— Կայսերական պալատան թարգմաններէն և տպագրական տեսչութեան Ա. քարաւորար Պողոս էֆ Պառնասեան ամսոյս հինգին մեռեր է:

— Փրովիտէնսէն (Ամերիկա) մեզ կը գրեն. — «Հոս Զատիկը շատ հոգեղուարճ անցուցինք, Ամերիկա՝ հեռու մեր երկրէն, բոլորովին օտար երկիր մը ըլլալով, Փրովիտէնսի մէջ ազգային եկեղեցւոյ համար եղած շարժումը մեծ գոհունակութեան արժանի է. թէև առանձին եկեղեցի չի կայ, մեծ սրահի մը մէջ կը կատարուին եկեղեցական արարողութիւնք: Այս քաղաքին մէջ և արուարձանները՝ 125 կոստաւորչական ընտանիք կը բնակին, որոց հովուութիւնը յանձնուած է Գեր Արսէն Վ. Վեհունիի:

Ս. Յարութեան տօնին օրը Գեր. քարոզիչի ջանքովը կազմակերպուած դպրաց դասը, ի զը-

լուխ ունենալով Պոլսեցի Պ. Երուանդ Ասատուր-
եան դպրապետը, շատ կանոնաւոր կերպով կա-
տարեց երգեցողութիւնը: Նոր աշխարհի մէջ
նմանը չի տեսնուած դպրաց դասի այս կազմա-
կերպութենէն ժողովուրդը խիստ գոհ մնաց:
Այս առթիւ Տիար Մեսրոպ Մամուլեան եկեղե-
ցիին նուիրեց իր ձեռքովը գծած Աստուածած-
նայ պատկերը զոր Ծաղկազարդի կիրակին օծեց
Գեր. Արսէն Վ. Վեհունի: Եկեղեցւոյ խորանին
համարալ մէկ վարագոյր նուիրեց Տ. Ռուբէն
Պէրպէրեան և շատ մը ուրիշ նուէրներ ալ եղան
ազգայիններու կողմէ:

ԿՈՐԻՒՆ

Երէկ կիրակի, իրիկուան ժամը 5ին քաղա-
քիս Մուսալլայի հրապարակը գտնուած Ապսիդ-
րահնան ճաւիխի կոչուած մեծ մզկիթէն հրդեհ
ծագելով, երկու ժամուան մէջ նոյն մզկիթն ու
մինարէն հրոյ ճարակ եղան:

ՆԱՄԱԿ ԵՄ ԳՐԱԳՐՈՒԹԵԱՆ

Պուրկազ 7 Մայիս 1902

Տեղւոյս Գարեգին քահանայ Արծրունին որ
ծանօթ է իր տխուր անցեալով, և զոր չորս եր-
կար տարիներու ապաշխարանք մը ի զգաստու-
թիւն չէ բերած, անգամ մը ևս իր ծայրահեղ
գայթակղելի ընթացքով Պուրկազի ազգայնոց մէջ
երկպառակութեանց և խռովութեանց պատճառ
դարձաւ: Կերեւի թէ Պուրկազի քառասպար-
տուած ենք երբէք չունենալ իր կոչման արժա-
նի քահանայ մը (*): Մէկը միւսէն անկարգ, ա-
մեն եկողը փորձանք կը դառնայ մեր գլխուն,
այս պատճառաւ եկեղեցի յաճախողներու թիւը
հետզհետէ նուազանալով խիստ սահմանափակ ե-
ղած է, նոյն իսկ Մենդեան և Զատիկի տօներուն
առթիւ: Եւ յիրաւի ի՞նչ սրտով ժողովուրդը եկե-
ղեցի երթայ, երբ հոն փոխանակ երկիւղածու-
թեան զգացումով տոգորուած բարոյապէս սնու-
ցանելու իւր հոգին, ի տես պաշտօնավարող քա-

(*) Մեր կարծիքով, քանի որ Պուրկազի Հայ ժողովուրդը
մէկ քանի աւագներ իր ձեռքովը վոնտած ասանկ վաղա-
ծանօթ, փորձեալ անուղղաներուն նորէն երես տալով
կընդունի զանոնք իր մէջ, գլուխը փորձանքներէ ա-
զատելիք չունի: Կեդրոնին գիմելով շէնք շնորհք բահա-
նալ մը բերել տալու է:

Ծ. Խ.

հանային՝ իւր երեակայութեան առաջ անբարոյ-
յականութեան ամենատխուր պատկերներ միայն
կընան պարզուիլ:

Եւ առաջ-Տիգրան թաղական խորհուրդ մ'ալ
ունինք, որ իր խորհրդատու անդամներէն գոր-
ծակցութեամբ, շահելու համեմատութեան սկզբ-
բունքով, ջանաց նախ ծածկել քահանայի գա-
ղանային արարքը, սօքանինք շրկելով եկեղե-
ցիին բակը՝ ժողովուրդին սպառնալիքներ կար-
գաց, բայց չի կարողանալով տիրոյ յուղման ա-
ռաջը առնել, վերջապէս ակամայ ճամբու դը-
րաւ քահանան, իր մտերիմ բարեկամը... որ
մօտերս Վառնա պիտի տեսնուի, իբր նուէր մը
Պուրկազէն:

Այժմ խօսք կայ թէ Փիլիպէէն Տ. Գէորգ Հիւր
միւղեանը պիտի գայ. Տ. Կարապետ Սահակեանն
ալ փափագ յայտնած է այստեղ պաշտօն ստան-
ձնելու: Ո՞վ գիտէ, ի՞նչ փորձանքներ վերապահ-
ւած են դեռ Պուրկազի հայոց գլխուն. ամեն
պարագայի մէջ սակայն չպիտի ցաւինք Տ. Գա-
րեգինի մեկնման վրայ, որ տարահաշակ Ֆեռքէլի
երկրորդ տպագրութիւնն է:

Առ այժմ այսչափ. թաղականներու մասին
ալ ուրիշ առթիւ:

* * *

ՆՈՐ ԵՐԳԱՐԱՆ

Կաւ Մոմունջ Հայկական

Շուրա 6 Մայիս 1902

Անցեալ շաբթու տեղի ունեցած ընտանե-
կան երեկոյթի մը մէջ պահ մը առաջարկուեցաւ
ազգային քանի մը երգ երգելու. առ այս եր-
գողներուն դիւրութիւն մը տուած ըլլալու հա-
մար տան տէրը փութաց երգարան մը բերել,
որու կողքին վրայ կը կարդացուէր «Բ. Տպագ-
րութիւն, Բարեխոխեալ եւ ճոխացեալ» բառերը:
Բայց որչափ մեծ եղաւ մեր զարմանքը, երբ
տեսանք թէ անոր պարունակած երգերէն մէկ
քանիները կիսկատար էին. օրինակի համար,
«Մայր Արաքսի»-ի «Խիլախ, անմիտ պատանի...»
և անոր յաջորդող չորս տունները չի կային, նոյն-
պէս «Հայրենեաց սիրով» երգին կէսը պակաս էր:
Իոկ միւս երգերուն մէջ տեսնուած խել մը տա-
ռասխալներու շնորհիւ բառերը հայաչինմաշի-
ներէն փոխուած էին, զորօրինակ, «Վըաար,
Ոերիք ելնենք. Վաղակտոր. Պերճ ուշլաւ. Զոմ-
րըն ի մէնջ. Մէն մաչերս. Պեմ տեսեր և այլ
ասոնց նման շատեր, որոնցմէ պիտի կրնանք հե-
տեցնել թէ Պ. հրատարակիչը կալքին վրայի «Բա-

բեփոխեալ և ճոխացեալ՝ գրուածին հաւատա-
րիմ գտնուելու համար երգերը պակսեցնելով
բարեփոխէր ու տառափալներով ալ ճոխացու-
ցեր է:

Նիտակը, գնահատելի աշխատութիւն. . . .
Երգող մը

ՍԻՐԱՅԻՆ ԿԱՅԾԵՐ

— 0 —

ՍՈՒԱԿԸ՝ ՎԱՐԴԻՆ

Սիրուն, չկնաղ կոյսի նման,
Կարնան երար դու երեսան.
Զմայելի դիւրիչ սեւսիդ
Յարիչսակումս եղայ գերիդ:

Մի դու, վարդիկ, խաչքեր սրսիս,
Անգամ մը գեթ լախոյի գիս. . .
Թող գիս հանգիստ քոյդ քաղցիմ,
Կոկոնիդ մեջ անվերջ հանգչիմ:

Գարուն միայն ունիմ ես, վարդ
Մահեղ ետքը սգեմ անգարդ.
Դու քաղձալի սեւսիդ է որ
Ինծի կուտայ նոր կեանք ու օր:

Այնքան սնկած վեր, օրերով
Կը տանջուիմ քո կարօտով.
Կրկին երբ գայ չկնաղ գարուն
Կը լսես իմ ձայնըս սիրուն:

Վերջին երգս քեզի ձօնեմ,
Յեւթն շունչդս անունդ երգեմ.
Միակ սերս ու ցանկալիս,
Փարիմ քեզի վարդ քաղունիս:

Թուսճուզ

Թ. ԱՆԼԵ

ԶԱՆԱԶԱՆՔ

Ճարպիկ մեքրեառնին — Պրազիլիա Սան-
Բաուիս քաղաքի պանդէրներէն Մ. Փօպէ Բոսօ-
լինօ անուն իտալացի մը անցեալները մէկ միլի-
ոն ֆրանքի պանքնոթները իր ճամբորդութեան
պայուսակին գողտնի մէկ խորշը տեղադրելէն
ետքը ճամբայ կելնէ և Պուէնօս-Ալբէս քաղաքը
կը հասնի. Սակայն հոն լմանալով որ Սան-Բաու-

լօէն ամէն կողմ հեռագիրներ քաջաւած են զին-
քը իսկոյն ձերբակալելու համար, ատրճանակի
հարուածով մը անձնաս պան կըլլայ:

Իր մէթրէսներէն մին որ պայուսակին մէջ
1 միլիոն ֆրի պանքնոթ պահուած ըլլալէն տեղ-
եակ է եղեր. անմիջապէս Սան-Բաուիսէն Պուէնօս-
Ալբէս կերթայ, ուր մաքսատան վերատեսչին
գրեւորվ կը խնդրէ որ իրեն յանձնեն անձնաս-
պանին ճամբորդութեան պայուսակը զոր իբր
առ հաւատչեայ իր սիրոյն կ'ուզէ միշտ քովը
պահել:

Մաքսատան վերատեսուչը՝ պայուսակին պա-
րունակութիւնը աչքէ անցնելէ ետքը, — որ մի-
նակ ճերմակեղէններէ կը բաղկանար — զայն
կը յանձնէ խնդրարկու տիկնոջ որ նոյն վայրկե-
սին կանեքեութեան:

Ժամանակ մը անցնելէ ետքը թէև Պրազիլիայ
ստիկանութիւնը կարծենայ, խնդրէն տեղեակ
կըլլայ և կը փնտռէ պայուսակը առնող կինը՝
բայց ի վեր: Ճարպիկ մէթրէսը ո՛վ գիտէ այս
միջոցիս ո՛ր կը գտնուի հետը տարած մէկ միլիոն
ֆրանքներով:

Երկարողինեառ ամենամեծ կայարանները
— Լա-Ռէվիլ. Սիանթիֆիք. Կրածին նայելով,
Բարիզի Սէն Լազարի կայարանը երկրորդն է այն
կայարաններուն որոնցմէ շատ ճամբորդներ
կանցնին. Յիշեալ կայարանէն տարին 43 միլիոն
60,000 ճամբորդք կանցնին եղեր. Այս գումա-
րէն աւելի ճամբորդ անձնող կայարանն է եղեր
Լոնտոնի Լիվըրքուլ-Սթրէթը, ուսկից տարին
44,377,000 ճամբորդներ կանցնին:

Հարս եւ կին. — Գերմանիոյ մէջ աղջիկ մը
նշանուելուն պէս, իր նշանածին կողմէ «հարս»
կը կոչուի, մինչև որ ժամանակը գայ իր «կինն»
ըլլալու. նշանուելուն պէս մատանիներ կը փ-
խանակեն, զորս, եթէ սէրը շարունակէ անխա-
փան, ամուսնութենէն վերջն ալ կը կրեն մինչև
մեռած օրերին. Կինն իր նշանտուքի մատին
ձախ ձեռքին ցուցաբառին վրայ կը կրէ մինչև
որ կարգուի, անկից վերջն ալ կը տեղափոխուի
ձեռքին ցուցամատին վրայ. նմանապէս էրիկը.
Այնպէս որ մէկ նախաւածքով կարելի է հասկնալ
թէ մարդ մը նշանուած է թէ կարգուած:

ԽԱՂԱՑՈՂԸ

—o—

Գեկտեմբերի գորշագոյն, մառախլապատ առաւօտ-
եան լոյսը պանդոկին փառազարդ հիւրասենեակին լայն
պատուհանէն կը թափանցէր և հետզհետէ աւելի
պայծառանալով ներս կը խուժէր :

Բոլոր գիշերը անքուն անցուցած կերպարանքով
մարդ մը որ քլուխը ձեռքերուն մէջ առած՝ խառն ի
խուռն խաղի թուղթերու ու մարելու մօտ ճրագի մը
մօտ նստած էր՝ ոտքի ելաւ, կանգնեցաւ :

— Ժամանակ է, մրմնջեց, այլ եւս ողջ չպիտի գլտ-
նեն զիս :

Ծռեցաւ, պատին յենած արկղը բացաւ և արագ
շարժումով ատրճանակ մը հանեց, որուն փայլուն փո-
ղին վրայ շողշուղացին օրուան ազօտ լոյսը և ճրագին
կարմիր ցոլքը :

— Ներէ՛ ինծի, Գլեմանս, գոչեց սրտէն՝ յուսա-
հատութեամբ, ներեցէ՛ք ինծի, զաւակներս :

Եւ զէնքին պաղ փողը քունքին կրթնցուց :

Բայց ձեռքը բաշխելու ոյժ չունեցաւ և թուրու-
թեամբ ինկաւ :

— Ոչ միայն անպատիւ, այլ նաեւ վատ, աղաղա-
կեց ամօթէն եւ անձնատելութենէն գրգռուած :

Բայց—արդարեւ պատուութիւն եւ մահուան եր-
կի՞ւղ էր այս պարգապէս : Մատի հարուածով մը ինք-
զինքը ամէն նշաւակութիւններէ և շարժարաններէ
փրկելու քաջութիւնը կրնա՞ր զլանալ ան՝ որուն աչքե-
րուն մէջ մահը այնքա՛ն անգամներ անթիթ կերպով
փայլած էր :

Արիութեան պակասութիւն էր երբ կեանքը ա-
մէն գրուագներէն անցնելէ ետքը՝ հիմա իր տառապ-
եալ սիրտը կը մաքառէր իրեն ամէնէն սիրելի և թան-
կագին եղող գանձին՝ իր պատւոյն հետ եւ միեւնոյն
ժամանակ երբ իրենները լքելու և կեանքի թշուառու-
թեանց մէջ անոնց նեցուկն ու պաշտպանը իրենցմէ խը-
լելու վայրագ որոշման դէմ կը զայրանային իր հոգ-
ւոյն ամէն բնական զգացումները :

Իր կեանքին վերջին տարիներու դէպքերը տեսիլքի
մը պէս յիշողութեանը առջեւ պատկերացան :

Վիէննայի մօտ, կապոյտ, գեղեցիկ Դանուբի վը-
րայ գտնուող Գամպուլայի մէջն էր որ, սնանկանալու
մօտ այս գերմանացի ազնուականը՝ վայելքներու հեշտու-
թեանց բաժակը մինչեւ մրուրը պարպել կուղէր : Եւ

իր այս հեշտ, շոյլ կեանքին մէջ էր որ դեսպանատան
մեծաշուք պարահանգէսի մը միջոցին իր այժմեան կինը
ճտնջած էր : Անոր երիտասարդական թարմութիւնը,
անմեղութիւնը եւ անկեղծութիւնը գիւթած էին զինքը :

Այս շնորհալի էակը ուղեց զինքը գրաւել, եւ իր
դիւթիչ ոգին, իր պատրիշ հաճոյակատարութիւնը գիւ-
րին միջոցներ էին այս նպատակին հասնելու համար :

Երիտասարդ ամուսնուր երջանիկ մեղրալուսինը ան-
ցուցին ընկերա՝ Զետոյ փոխադրուեցան հիւսիսային
Գերմանիոյ մէջ ունեցած իրենց պապենական կալուած-
ները : Գիւղին հեշտալի, կենսատու օդին մէջ, իր դե-
ռատի կնոջ մօտ իրեն համար անկեղծ զուարթութեամբ
նոր կեանք մը սկսաւ փթթիլ : Հիմա կ'զգար թէ որքա՛ն
երիտասարդ, որքա՛ն երջանիկ էր ըստ ինքեան :

Բայց անոնք չկրցան միշտ այդպէս մնալ : Հոգը
սկսաւ ղաղքեցնել շանոնք : Իւրաքանչիւր կողմն ալ միւս-
ը հարուստ կարծած էր, և իւրաքանչիւր սոսկալի
յուրախաբութեան մէջ ինկաւ : Երկուքնին ալ ոչինչ ու-
նէին :

Բայց որովհետեւ սիրով էին, իրարու երկարեցին
ձեռքերնին և ուխտեցին իբր քաջ ընկերներ միասին
մղել կեանքի պայքարը :

Մատաղ կինը իր ծանրագին զարդարանքները տը-
ւաւ որպէս զի գրաւի գրուելով նախ քան մը գրամ
հայթայթուի : Իսկ մարդը հրաժարեցաւ այն ամէն բա-
նեքէն որոնք մինչեւ այն ատեն իր կեանքը յուզած եւ
գեղեցկացուցած էին, և գիւղացի մը ըլլալ արժանի
համարեց ինքզինքը իր նախահայրերէն ժառանգած հո-
ղերուն մէջ, որպէս զի անոնցմէ քաղէ իր շահն ու բա-
րիքը : Առաջ շատ լաւ կոնծող էր : Հիմա գրեթէ կա-
թիլ մը անգամ բերանը չէր առնէր : Իր մօլի և յան-
գուգն խաղասիրութիւնը առածի կարգ անցած էր իր
ծանօթներուն շրջանակին մէջ : Բայց ալ խաղաթուղթի
չէր դպցներ մատը :

Շատ տարիներ աշխատեցան այս երկու ամուսին-
ները, առանց մեծ արդիւնքի : Իրենց միակ սիրտիան-
քը, իրենց միակ վայելքը, նորարողութիւն, անմեղ զաւակ-
ներու հետ անցուած ընտանեկան ամենասիրելի ժամե-
րն էին : Եւ այս սուրբ, երջանիկ ժամերը լիովին կը
փոխարինէին բոլոր յոգնութիւններն ու չբաւարութիւն-
ները :

Անկարողելի երջանիկ վայրկեան մըն էր երբ իր
կնոջ գոհարեղէնները կարողացաւ վերջապէս գրաւել
հանել եւ դեռ բաւական մեծ գումար մը պահեստի
դորձածութեան համար պահեց, ու մտադրեց Ծննդեան

տօնը լաւ կատարել : Ինքզինքը խիստ գոհ և երջանիկ
չը զգար որ իր աշխատութիւնները այսպէս լաւ վար-
ձատրուեցան :

Քանի որ գաւառական գլխաւոր բաղադրին մէջ քա-
նի մը օր գեռ պիտի մնար՝ ուղեց անգամ մըն ալ իր
նախկին ընկերներուն , — Ուհլան սպաներու հետ—
զուարճանալ :

Եւ անոնց շրջանակին մէջ երկու պարոններու ծա-
նօթացաւ որոնք մայրաքաղաքէն էին : Նոյն չէր գիտեր
թէ ինչ ընէ այս նոր ներկայացեալներուն հետ : Բայց
երիտասարդ սպաներուն անոնց հետ ունեցած գրեթէ
մտերիմ յարաբերութիւնները փարատեց իր բոլոր կաս-
կածները , բոլոր երկմտութիւնները :

Հաղակրատեցին , կատակեցին , վերջապէս փոքրիկ
թղթախաղ մը առաջարկուեցաւ : Գրեթէ ամենքն ալ
մասնակցեցան : Սկիզբէն խիստ չափաւոր դրամով : Աս-
տիճանաբար բարձրացան գումարները բայց այնքան դան-
դաղ յառաջխաղացութեամբ որ խաղացողներէն ոչ ոք
նշմարեց թէ խաղը կը մեծնայ : Օտար պարոնները ար-
տասովոր բաղդ մը ունէին և մեծ գումարներ կը շա-
հէին :

Լուրջ որոշմամբ , նախ ամէն հրաւեր մերժած էր
խաղին մասնակցելու համար : Այս մոլութեան մէջ փոր-
ձառութիւն ունէր և սուր աչքերով կը բնէր օտարա-
կաններուն մատները , բայց կասկածելի բան մը չէր տես-
ներ : Անոնց չափազանց յաջողութիւնը կը գրգռէր զին-
քը թղթախաղի մէջ ունեցած բաղդը անգամ մըն ալ
փորձելու : Ուստի փորձի համար միայն ուղեց գոնէ քա-
նի մը անգամ փոքր , չափաւոր գումար մը խաղի դնել :

Իր հին մոլութիւնը դարձեալ զինքը բռնած էր իր
ճիրաններուն մէջ : Ոսկիի կոյտերը ամէն կողմ կը գլտո-
րէին և միշտ իրարու վրայ կը գիղղէին հետզհետէ : Ա-
ռաջ քանի մը անգամ շահեցաւ : Յետոյ տեսաւ թէ
կորուստի ճամբուն մէջ կը յառաջանայ : Արկնեց , եռա-
պատկեց , տասնապատկեց խաղի դրամ գրամը : Սպա-
ները ջերմ հոգածութեամբ ընդհանել կ'ուզէին զինքը ,
յուսաւորով որ գոնէ կարճ դադար մը ընել տալով զին-
քը գիտակցութեան բերեն : Բայց մտամոլոր վիճակի մէջ
էր ան , իր աչքերուն հանդէպ կը շողար ոսկին , կը ծա-
ծանէին նիշերը , խաղի թուղթերը կը պարէին :

— Ո՞րքան դրամ ունիք պանքի մէջ , հարցուց վեր-
ջապէս :

Արագ գնահատութեամբ սարսափելի գումար մը
ըսին իրեն :

— Լաւ , ուրեմն վա պանկ ըսաւ :

Խաղաթուղթը բացուեցաւ : Կորսնցուց . . .

— Եթէ 48 ժամ վճարման պայմաւորով մը շնոր-
հէք ինծի , անգամ մըն ալ վա պանկ ընել կը յո-
ժարիմ և այս կերպով պարտքէս ազատած կամ կրկին
պարտական կըլլամ :

— Ամենայն հաճութեամբ :

Խաղը շարունակեց իր ընթացքը : Այս անգամ ալ
հաջողածը ստացաւ :

Արիւնը զլուրը խուժեց : Կը կարծէր թէ խելա-
կորոյս կըլլայ : Կործանած էր . ամէն աշխատութեանց ,
բոլոր զրկանքներուն պտուղը ոչնչացած էր : Այո , գեռ
աւելին — խաղին վրայ կեցած էր իր պատիւը : Գրեթէ
անկարելի էր այս գումարը ունենալ :

Հիտեհալ օրը աճապարանքով բարեկամներուն ,
յետոյ գրամատներներուն և վաշխառուներուն գնաց : Ոչ
ոք կրնար օգնել իրեն : Ոսկիէ լեւեր խոստացաւ , բայց
ոչ ոք կրնար իրեն ոսկիէ բլուրներ հաւաքել :

Մահու չափ տոգոյն , սրտաբեկ և բնաջինջ եղած
իր իջեանած պանգոկը հասաւ վերջապէս :

Իր սիրելիներուն , իր քնոյ և զաւիներուն համար
անձկութեամբ և տխուր մտածումներով կ'անցընէր իրեն
շնորհուած այս վերջին գիշերը :

Հարաք չկար բնաւ : Պէտք էր մեռնիլ : Թեթեա-
ւտութեան միակ ժամ մը աւերած էր ինչ որ տարինե-
րու համբերութեամբ և ամէն ճիգերու բարձրագոյն
ձգտումներով յառաջ բերուած էր :

Այս բանը այնքան ահաւելի կը թուէր իրեն որ կու-
ղէր բարձրաձայն խնդալ , Բայց իր հոգին մթին յուսա-
հատութեան մէջ ընկղմեցաւ և կոյր , անգուլթ ճակա-
տագրին դէմ զայրանալու ուժ չունեցաւ :

Անգամ մըն ալ փորձեց այն գործը կատարել և
արագ , կարճ վախճան մը տալ : Բայց իր ջղաձիգ բա-
ղդը դարձեալ կրեցաւ :

— Անողորմ , գոչեց երկու ձեռքերը երկինք բարձ-
րացնելով , մի՛ թողուր որ իմ մեղքերուս պատիժները
կրնա ու զաւկներս կրեն , այս անգամ միայն փրկէ զիս ,
եւ իմ ամբողջ կեանքս , իմ ամէն հոգերս ու գործերս ,
իմ բոլոր պայքարներս եւ կռիւներս անոնց համար պի-
տի ըլլան :

Նայուածքը պատուհանին դարձուց ու տեսաւ որ
արեւը ծագած էր :

Չարագուշակ ժամը հնչած էր : Իր կեանքը կոր-
սուած էր : Պատիւը , այն անողորմ դատաւորութիւն , ար-
դէն ոչնչացուցած էր զինքը երկրէն բաժնուելէն առաջ :

Իր խելական ես էն ուրուական մը միայն մնացած

մնացած էր : Մինչեւ այն ատեն իր որոշման գէժ մարտնչած էր , իսկ այդ վայրկեանէն մտածեց սոսկալի գործողութիւնը այն ատեն միայն ընել , երբ իր գոյութեան վրայ իրաւունք ունեցող մարդիկը իրեն ներկայանային : Իր ապրած իւրաքանչիւր վայրկեանը կը փշրէր իր պատուոյն մինչեւ ան ատենուան անբծութիւնը , բայց միևնոյն ժամանակ իր խղճին առջեւ կ'արդարացնէր նաեւ իրեննեւրուն հանդէպ ունեցած պարտականութիւնները : Բաւական էր որ ապաշնորհ պարտապահանջներուն ներկայութեանը գլխուն պարպէր սպաննիչ կապարը : Աւելին պարտական չէր անոնց :

Անագորոյն դանդաղութեամբ կը սահէին վայրկեանները :

Ա՛հ , դրան առջեւ ոտքի ձայներ լսուեցան :

Դուռը վարնուեցաւ վերջապէս :

Ատրճանակը ձակտին դրաւ : Հոն , դրան ետեւէն կը մօտենար մահը . կործանումը գիշատիչ անասուններու պէս իր հրաբորբոք աչքերով և արիւնարբու վրէժխնդրութեամբ կեցած էր հոն :

Իր մեծ ու սառած աչքերը խելացնորի նման դարձուց դէպի դրան բացուածքը եւ դողացող ձայնով մը գոչեց . «Մօխ՛րդ :

Ճակտէն վար առաւ ատրճանակը : Բոլորովին անծանօթ մարդ մը երեցած էր դրանը մէջ :

— Ո՛վ էք դուք : գոչեց թշուառը ցրուած մտքով , մինչ գէնքը կիսնար ձեռքէն :

— Եղիոնադատ ատենին յանձնակատար , Հարապիհան եմ , Պարոն , և Ձեզի տեղեկութիւն պիտի տամ : Երէկ չէ՛ առջի օրը կեղծ խաղացողներու ճանկն էք ինկեր :

— Կեղծ խաղացողներո՞ւ . բայց անկարելի՛ է . ես շատ լաւ բնեցի այն պարոնները , կեղծ բան մը չի գրտայ , խաղաթուղթներուն վրայ նշաններ բնաւ չի տեսայ :

— Անշուշտ ոչ , այդպիսի մարդոց համար այդքանը խիստ սովորական ձեռարուեստ մըն է : Ալիձի թուղթները ունէին , որով խաբեցին ձեզ . չանոնցմէ զոյգ մը պատահամբ մեր ձեռքը ինկաւ : Այդ ստահակները երբ հասկցան թէ իրենց հետքերուն կը հետեւինք , անմիջապէս կծիկը դրին : Բայց անոնց հետքը գտած ենք հիմա եւ հաւանականաբար կը յուսանք . . .

Բառերուն մնացեալ մասը անխելի մնաց սակայն , երջանկութեան դողդոջուն յուզմամբ դուրս թողաւ զոչելով . «Փրկուեցա՛յ» :

Թաղով . Գերմ .

Վ .

Ը Ն Տ Ա Ն Ե Կ Ա Ն

— 0 —

«ՍԷԼԱՄ ՓԱՐՍ , ՔԷԼԱՄ ՓԱՐՍ»

Մեծ—Բիթեանց կուռնելիոս աղան , կիրակի օր մը , իր ազգականներէն այլրի տիկին Մագթաղինէի տունը այցելութեան կերթայ :

— Օ , բարի եկաք կուռնելիոս աղա , աս ո՞ր հով փչեց . խըյանէթ , ի՞նչ մեղքս պահեմ , սըրդողած ենք քեզի դէմ :

— Ինչո՞ւ .

— Էբէյի ատեն է որ մեզի եկած չես . բարեկամութիւնը , ազգականութունը ասանկ կը լալ :

— Իրաւունք ունիս . հաւատա որ ամեն ատեն մտքերնիս էք , բայց մէյմէկ պատճառներ արգելք կըլլան : Ի՞նչպէս էք , ապէ՞կ էք :

— Է՛հ , փառք տիրոջը , սանկ նանկ կերթանք կոր :

— Օրիորդ նեմղուրը ի՞նչպէս է , անոր համար խայլըրը բան մը իմացանք ամա . . .

— Ա՛յն , կուռնելիոս աղա , գիտես ա՛ , էվլատըն վար տէրտն վար կըսեն :

— Անանկ է . ֆախաթ նորէն ի՞նչ եղաք . ի՞նչ ունիք , էրիկ մը ունէիր , մեռաւ գնաց , դուն ալ ազատեցար , ան ալ :

— Այն կուռնելիոս աղա , աս հիմակու ճահիլները մինակ իրենց խելքին կը հաւնին . մեղ հիշ մտիկ չեն ըներ :

— Ի՞նչ եղաւ որ :

— Ճանըմ , երկու հոգի ելան նեմղուրս ուլուլ :

— Աղէկ ա իշթէ , նայի՛նք ինտո՞ր մարդիկ են :

— Մէկը Էւրոբայէն նոր եկած 40—45նոց տօթթու մըն է :

— Ունե՞ր է :

— Ձէ՛ , չիտակը կուղծս նէ ունեւոր չէ :

— Է՛հ , ատոր վրայ մտածել անգամ պէտք չէ . «Իբի չըպլապ պիւր համամտա եագըչըր» կըսեն :

— Ունեւոր չէ ամա , մէջերնիւ մտնայ տէ էթրաֆ թարաֆ մեր բարեկամներով քիչ մը խայլէթ ընենք նէ՛ վրայ կուգայ , առաջ կերթայ :

— Ատ ալ կրնայ ըլլալ :

— Աղէկ ամա , նեմղուրս աս տօթթուը չուլեր կոր :

— Ուլածը ո՞րն է :

—50—55 տարու, խույումներով են թա-
գավիտ զէնկին մը կայ, ան է ուղածը:

—Վա՛յ սատանայի աղջիկ:

—Հիմա դուն սղջկանս խելքին ի՞նչ կըսես.
խենդ չէ տէ հապա ի՞նչ է:

—Ինձի կը հարցունես նէ՛ շատ խելացի է
կըսեմ:

—Վու՛յ ճանրմ կուռնելիս աղա, 50—55
տարու տէտէին տեղ մարդը կը վայլէ՞ իրեն:

—Մագժաղին տուտու, կեցիր առաջ սա
տարիքին հիսապը շտկենք, Շիտակ ըսէ, նէմզու-
րիկդ քանի՞ տարու է:

—Էհ, սանկ, 25 տարու, էվել չի կայ:

—Փեսացուդ ալ թող ըլլայ 55 տարու:

—Հա, ըռահաթ կայ:

—Հիմա ասոնք կարգուելուն պէս, և եղի-
ցին երկուքեան ի մարմին մի պիտի ըլլան, ա-
նանկ չէ:

—Հա, անանկ է:

—Ըսել է որ աս երկու մարմինները մէկ
խմոր մէկ մայա ըլլան նէ՛ անոնց ատրիքն ալ
իրար խառնուելով, երկուքինը իրարու վրայ 80
կընէ, ասիկա երկուքի բաժնենք նէ՛ 40 կը գըտ
ենք. հիմա հաւասարութեան օրէնքով նէմզու-
րիկ տարիքը 25էն 40ի ելլայ նէ՛ փեսացուիդ
տարիքն ալ 55էն 40ի իջած պիտի ըլլայ:

—Ատ ըսածիդ խելքս չի պառկեցա:

—Քա ճանրմ, 2նոց ու 4 զրուշնոց գինինե-
րէն մէյմէկ օխա առնես իրար խառնես նէ, ի-
րարու վրայ օխան 3 զրշ.ի եկած չըլար մի եա՛:

—Պէլի:

—Իմ ըսածս ալ իշթէ ասոր պէս է: Հիմա
նէմզուրդ հիսապ ըրեր է որ խօսքով, պօռու
ֆանթաղիով գործ չի լինար, ասին բան բարա-
յով կըլլայ, սէլամ բարա՛, քէլամ բարա կըսեն կոր.
չիւնքի աշխարհիս երեսը բարասըղ ըրահաթու-
թիւն չըլլար, ասոր համար անանկ էրիկ մը առ-
նել կուզէ կոր քի՛ իր ուզելիքները կատարէ:

—Այէկ կըսես ամա՛ բիացաին մէջ ատ 55նոց
թագավիտին անունը չի յիշորի, ֆախաթ աս-
գիինը տօթթու է:

—Պէ ճանրմ, թող աղջիկդ ըռահաթ ընէ տէ
էրկանը անունը չի յիշորի: Հէմ դուն ադ խել-
քովդ եղիր որ չի յիշորի, վաղը ելլայ թախլան
նետէ նէ՛ էն առաջ կարգաւորները եկեղեցիին
բեմէն անոր համար անանկ պօլլամաներ, անանկ
յովասանքներ պիտի տան քի, մեռնողը պիլէ
պառկած տեղէն թէ որ իմանայ՝ ինքնիրենը պի-
տի ըսէ, «աս ինչ թօհաֆ բան է, հիշ չէի գիտեր
որ ես մեղաւորս առողջութեանս ասանկ առաքի-
նի ու բարեգործ մէկն եմ», իշթէ ադ քարողը

լսողները փետիգ անունը յիշելով թէքմիլ բիա-
ցաին չալ պիտի ընեն:

—Խոստովանանք մնայ ամա, աճապա չարուխ
կը մեռնի՛ կըսես. նէմզուրս մէրասկուտէ, հէմ
նորէն կը կարգենք: Հօշ հարցնելս պօշ բան է,
իծծուն տարի տահա չի պիտի ապրի եա՛:

—Ասիկա չիյտեմ, հրեշտակապետին աղբօրը
տղան չեմ քի անոր հարցունեմ:

—Ատ հիսապներով, չըսես նէմզուրս խելա-
ցի է եղեր. եսր չէ նէ մեզի կըսեն քի բարասըղ
խելացի ճահիլը՝ բարալը անխելք էրիթիյարէն
տահա մախպուլ է:

—Ատոր զիւյիւրտ թէսէլլիհի կըսին. է՛յ
չաշղըններ, փարայի տէր եղալ էրիթիյարը խել-
ացի չըլլայ նէ՛ փարան սըխը սըխը չի պահեր.
անիկա դիտէ որ հիմակուան ժամանակս բարան
է որ մարդը հէմ խելացի կը ցուցնէ հէմ իխ-
թիպարը. «սէլամ բարա, քէլամ բարա» կը-
սեն կոր. ատ ձեր լսածները վախիթ մըն է ե-
ղեր. հիմա, բարա չունեցողը բերնովը խուշ ալ
բռնէ նէ՛ երեսը նայող չըլլար, վէսէլամ:

ՔՈՒԹԱԿ

ՀԵՌԱԿԻՐ

Աժանս Բոժոժիկ եւ Ընկ:

Քամ չաթքա

Անցեալ կիրակի առաւօտ մեր Մալիւմ աղան
մինչև եկեղեցի յառաջացաւ՝ ձախ ականջին վրայ
զետեղած ըլլալով խաքսեղի խոշոր խառանձիղ
մը՝ որ անցորդներուն ծիծաղը կը շարժէր:

Նոյն

մալիւմ աղան 8 ֆրանք խարճելով գիյա-
ֆէթ մը պիտի տայ ի Բէյնիրճիք, հաշտուելու հա-
մար այն բարեկամներուն հետ, որոնք իր մա-
սին «Հաշնի» լրատարութիւն (?) կընեն եղեր.
կը մաղթենք որ կերցնելիք հացը որ առդար
վաստակի արդիւնք է, խելճերուն կսկորդը չի մը-
նայ:

ՎԵՍԷԼՈ Հայ թատերախումբը յառաջի-
կայ ուրբաթ իրիկուընէ կը սկսի ամառնային շըր-
ջանի ներկայացումներուն: Ի Թատրոն Պորիս:

Ներկայացուելիք առաջին խաղն է «Մուրա-
ցիկ մայրը» տրամագծէտի 4 արար. Զաւենտ 1
արար. Պարերգ Պ. Գ. Յակոբեանի և Օր. Ռօզիլիի
կողմէ:

ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ «ՀԱՅԵԼԻ»

Կը տպագրուին ամէն լեզուէ այցետոմս, հասցէտոմս, նամակագրութիւն, հարսանեկան հրաւիրագիր, մահազդ, թատերական ազդեր, տոմսակներ, գիրք և յայտարարութիւններ:

Գիները յոյժ դիւրամատչելի:

Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւնները ճշդութեամբ և փութով կը կատարուին:

Այցետոմս տպագրել տուողներուն նուէր կը տրուի «Ի՞նչպէս գործածելու է այցաքարտը» անուն հրահանգի գրգոյշ մը:

ՅԱՆՁՆԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻՒԿ



ԲԱՑ ՆԱՄԱԿ

Թէև Տպարիշը Պուլկարիոյ պզտիկ քաղաքներէն մէկն է, ուր նկարչութեամբ և լուսանկարչութեամբ կը պարապիմ. ու թէև գտնուած միջավայրս շատ յարմար չէ յուսալի մթնոլորտին բայց միշտ աշխատած եմ արհեստիս գիտակցան և արուեստական ամենավերջին կատարելագործութեանց քայլ առ քայլ հետեիլ, որուն շնորհիւ այսօր ունիմ արուեստին վերջին կատարելութեամբը օժտուած գործիքներ որոնց հետ նաև նկարչութեան արուեստիս շնորհէ և կարող եմ արտագրել ակունքսիւնս ամենակատարելագործեալ պատկերներ, զոր մասնաւոր կերպով մշակած եմ, և որուն մէջ նկարչութիւնը մեծ գեր կը խաղայ: Ասիկա փորձելը դժուար չէ, կրնաք Ձեր մէկլուսանկարը զրկել իմ հասցէիս և պիտի օտանաք մեծագիրը օրինակին ճիշդ նման, միայն 15 ֆրանքի փոխարէն, այն ալ պատկերը ոտանալէ և հաւնելէ վերջը վճարելու պայմանաւ: Իսկ անոնք որ կտան ի վրայ իւղանքի՝ բնական գոյներով պատկերին կուղեն ունենալ, պէտք է գաղափար մը տան գոյնին նկատմամբ, (երեսի, աչքերու, մազերու և հագուստի գոյնը) բնական մեծութեամբ, 35 ֆր. ի փոխարէն, վերոյիշեալ պայմաններով:

Թէև շատեր ակունքսիւնս պատկերներ կը պատրաստեն, բայց ես կը վստահեցնեմ որ ոչ մէկինը կրնայ այնչափ կատարելագործուած ըլլալ որչափ նկարչի մը պատրաստածները. վասն զի առանց կանոնաւոր ուղղորդի՝ ոչ մէկ ակունքսիւնս արժէք կրնայ ունենալ:

Յարգանք

Ն. ՍԻՍԱԿԵԱՆ

Նկարիչ-Փոթովրաֆ ՏՊՐԻՉ




— Հրատարակուեցաւ ԲԱՆԱՍԷՐ օգտաշատ հանդէսի Ապրիլի պրակը:

Տարեկանն է 15 ֆր. Հասցէն է:



ՊԱՍՏԱՃԱՆ

112 Պուլկար Ռօշըշուառ Բարիկ



ԾԱԽՈՒԳ ԻՐ ՔԵՐ

Հետեւեալ գիրքերը մեր խմբագրատան մէջ կը ծախուին:

Լուսինեան, Իշխան — Ֆրանսահայ Բառարան գին 25 ֆր. ոսկեդրամ. Պուլկարահայ վարժարանաց համար 20 ֆրանք:

Թ. Գ. Հինուրեան — Տեսական և գործնական Գերականութիւն Պուլկարերէն լեզուի 1 ֆր.

Ե. Մուրատեան — Քննական պատմութիւն Արշակ Բ. ի և անոր Պապ որդւոյի 2 ուկէս ֆր.

Շէյքսպիրի Համլէթը, ողբերգ. 2 50 ֆր.

Թրթուսներ (ոտանաւոր) 25 սնդ.

Հովաստեն " " 25 "

Լեւոնտուածոր " " 20 "

Բաղդախաղ պատկեր 25 սնդ.

Թասլաքեար Փիլիկ աղբօր հարսնիքը 60 սնդ.

Բարեկենդանի անկուտիները, կատակախաղ 1 արար 50 սնդ.

Մահճուպիյէթին միւքեաֆաթը, գօմէտի պիր բէրտէ, 50 սնդ.

Գողանճ գօճա եախօտ էնֆիյէճի, գօմէտի պիր բէրտէ, 50 սնդ.

Печатница "Взаимность," — Варна